ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար օդորակիչների, տպիչների, համակարգչային և պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հուլիսի 25-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-3» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 2023 թվականի կարիքների համար 6-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հատկացվել են ֆինանսական միջոցներ, իսկ 3-րդ և 21-րդ չափաբաժինների մասով անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցվել են:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 23.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5, 7.8 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

25.07.2022թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/ 07-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 18 » դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և Սևակ Մնացականյան ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 25.07.2022թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.8 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Կատարողի համաձայնությունը՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով 2023 թվականի կարիքների համար 3-րդ չափաբաժնի մասով հատկացված 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամից 179000 (մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամի չափով և 21-րդ չափաբաժնի մասով հատկացված 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամից 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական հատկացումների նվազեցման վերաբերյալ, ինչպես նաև Պայմանագրով սահմանված 6-րդ չափաբաժնի մասով՝ 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, 12-րդ չափաբաժնի մասով՝ 3520000 (երեք միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, 15-րդ չափաբաժնի մասով՝ 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից՝ համապատասխանաբար 330000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի, 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամի, 265000 (երկու հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի 23.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝ 01.09.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայություններ դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 3 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***Սևակ Մնացականյան ԱՁ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ս. Զորավար 38/1
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 35229078
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 16051021324400
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	**Ս. Մնացականյան**
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 18 » « 12 » 2023թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 1
« 23 » « 03 » 2023թ. կնքված N 2 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
3	50711100/10	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ												21000	21 000
6	50711100/5	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ												530 000	530 000
12	50711100/6	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ												290000	290 000
15	50711100/7	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ												465000	465 000
21	50711100/8	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ													

27	50711100/9	շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ				70000	70000	70000	120000	120000	120000	200000	200000	200000	200000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Սևակ Մնացականյան ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Ս. Զորավար 38/1
ՀՀՎՀ՝ 35229078
Հ/Հ՝ 16051021324400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ

Ս. Մնացականյան

(ստորագրություն)
Կ.Տ